

4434



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

« 18 » 04 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 047 - 24

**Ձեռնարկողը՝**

«ԳԵՎՈՐԳ-ՄԱՌԱ» ՍՊԸ

Արագածոտնի մարզ, Աշտարակ համայնք, Երևանյան խճուղի, թիվ 2

**Գործունեությունը՝**

Բազմաբնակարան շենքերի համալիրի  
կառուցման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության նախնական գնահատման հայտ

Աշտարակ համայնք, Աշտարակ բնակավայր Երևանյան փողոց 2/10

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**  
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՃԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

**ԲՓ № 047 - 24**

« 18 » 04 2024թ.

**Բազմաբնակարան շենքերի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝	«ԳԵՎՈՐԳ-ՄԱՌԱ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Աշտարակ համայնքի Աշտարակ բնակավայր

**Ներածական մաս.** «ԳԵՎՈՐԳ-ՄԱՌԱ» ՍՊԸ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է Աշտարակ համայնքի, Աշտարակ բնակավայրի Երևանայան փողոց 2/10 հասցեում կառուցել ժամանակակից բազմաբնակարան շենքերի համալիր: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության: Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 17102023-02-0043, /ծածկագիրը՝ 02-001-0094-0057/, ճարտարապետա-հատկագծային առաջադրանքը՝ N518, տրված՝ 20.10.2022թ.: Ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՍՊԸ-ի կողմից տրված ջրամատակարարման և ջրահեռացման տեխնիկական պայմանին համապատասխան (N ՎՋ 6357/2022 տրված 09.12.2022թ.), էլեկտրամատակարարումը՝ «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրվող տեխնիկական պայմանի հիման վրա:

Հողամասերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Ներկայումս տարածում չկան քանդման ենթակա շինություններ, հատման ենթակա ծառաթփային բուսականություն, որոնք կարող են խոչընդոտել շինարարական աշխատանքներին: Տարածքը ամբողջովին հարթեցված և մաքրված է շինանրարական աղբից: Հողամասը ինժեներաերկրաբանական տեսակետից բարենպաստ է կառուցապատման համար, ընդհանուր մակերեսը կազմում է 0.4725 հա:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող «Բնակելի համալիրի» նախագիծը բաղկացած է 2 մասնաշենքերից՝ Ա և Բ, հասարակական տարածքներից, ստորգետնյա ավտոկայանատեղիից և առանձնացված հասարակական կիսաստորգետնյա շինությունից: Ա մասնաշենքը նախատեսվում է 14 բնակելի հարկերից, իսկ Բ մասնաշենքը նախատեսվում է 15 բնակելի հարկից: Շենքերի վերջին հարկերի բնակարաններից նախատեսվում է թեթև մետաղական աստիճանանավանդակներ դեպի շահագործվող տանիք: Նկուղային հարկերը /-3.30 և -0.00 նիշերում/ նախատեսված են ավտոկայանատեղիների համար /97 մեքենա/: Շենքը ունենալու է թվով 253 բնակարան: Շենքերը նախատեսվում են միաձույլ երկաթ/բետոնե շրջանակայանին հիմնականաբար:



իրականացմամբ, ներառյալ՝ շենքի հիմքերը, սյուները, հեծանները և միջհարկային սալերը: Ճակատները նախատեսվում է երեսպատել սպիտակ տրավերտինե սալերով կամ ֆիբրոցեմենտային սալերով, մուգ երանգի տուֆե սալերով, ցոկոլային հատվածներում բազալտե սալերով: Համալիրի համար նախատեսվում է կառուցել ներքին ճանապարհային ցանց:

Նախատեսվող բազմաբնակարան շենքերի համալիրի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- Հողի ընդհանուր մակերես՝ 4724.45 մ<sup>2</sup>:
- Շենքի կառուցապատման մակերես՝ 1433 մ<sup>2</sup> – 30.33 %:
- Կանաչապատման մակերես՝ 1904 մ<sup>2</sup> – 40.30 %:
- Անջրանցիկ՝ (Մայթ, ճանապարհ, ճեմուղի և այլն)՝ 1387,38 մ<sup>2</sup> -29,37 %:
- Ստորգետնյա կառուցապատման մակերես՝ 4084,02 մ<sup>2</sup>:
- Բնակարանների քանակ՝ 253 հատ:
- Ավտոկայանատեղի 97 հատ:

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական արտադրական ձեռնարկություններից: Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ և միջոցառումներ՝ դեպի բնակելի և հասարակական տարածքներ, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ: Ա և Բ մասնաշենքերի ջեռուցումը անհատական է, օգտագործվելու է ջեռուցման կաթսաներ, իսկ մնացած մասնաշենքերի համար նախատեսված է կենտրոնացված ջեռուցում:

Բնակելի հարկերի ընդհանուր օգտագործման միջանցքներում նախատեսվում են առանձնացված հորաններ՝ ինժեներական ցանցերի իրականացման համար՝ ջրամատակարարում, էլեկտրասնուցում, ծխահեռացում: Թաղամասում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգեր, որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտագործմամբ:

Ավտոկայանատեղում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Շենքի բնակելի մասի միջանցքներից և ավտոկայանատեղերից իրականացվում է ծխահեռացում:

Շենքը հագեցած է լինելու էներգաարդյունավետության և էներգախնայման համակարգերով: Շենքերի տանիքներում տեղադրվելու են արևային վահանականեր, որոնց արտադրած էլեկտրաէներգիան օգտագործվելու է շենքերի կարիքների և ընդհանուր տարածքների լուսավորության համար:

Շինարարության իրականացման հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 26000 մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր: Հանվող 20500 մ<sup>3</sup> ծավալով զանգվածը կտեղափոխվի Աշտարակի համայնքապետարանի կողմից հատուկ հատկացված վայր, մնացած մասը՝ 5500 մ<sup>3</sup>-ը կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք (պահվող կույտի մակերեսը կտոփանվի՝ փոշեառաջացումը կանխելու նպատակով): Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում բուսահողը գնահատվել է 230 մ<sup>3</sup>, որը կօգտագործվի բնակելի համալիրի կանաչապատման աշխատանքներում: Շինանրարության փուլում բուսահողը օրենքի պահանջներին համապատասխան ժամանակավոր կպահեստավորվի տարածքի արևային մասում:



Բնատեսուրսներից օգտագործվելու է նաև ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում կենցաղային աղբն է 20200 կգ/տարի և շինարարական աղբ՝ 400մ<sup>3</sup>: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է Աշտարակի համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից: Նախնական ուսումնասիրությունների և գրականական տվյալների նույնականացման արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում «Կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չեն հայտնաբերվել: Տարածքում ծառեր և թփերը բացակայում են: Տեղամասում մինչև 17 մետր խորության վրա ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել: Ֆիզիկատերկրաբանական վտանգավոր երևույթներից կարստ, սողանք քարաթափություն, փլուզում և այլն բացակայում են հայցվող տարածքում, ինժինեռատերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

**Պարճառաքանական մաս.** Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատման աշխատանքները կիրականացվեն Աշտարակի համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համապատասխան: Կանաչապատման մակերեսը կկազմի ընդհանուր հողամասի 40.30%-ը, կանաչապատման համար օգտագործվելու է հողային աշխատանքների ժամանակ պահեստավորված 230մ<sup>3</sup> բուսահողը, կանաչապատումն կիրականացվի համաձայն կանաչապատման հատկագծի և սխեմայի՝ տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտնկվեն ծառեր և թփեր: Շինարարության կազմակերպման և իրագործման աշխատանքների ժամանակ նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել պարբերական ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը իրականացել փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ՝ խլացուցիչներ,

Բազմաբնակարան համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շինհրապարակում և շինհրապարակի հարևանությամբ նախատեսվում է իրականացնել մթնոլորտային օդում արտանետումների (փոշի, CO, NO<sub>x</sub>) չափումներ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ, ինչպես նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կաչողականությունը չափահավող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

**Եզրափակիչ մաս.** Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և «Կառավարության 1325-Ն որոշման սահմանված



պահանջների՝ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են Աշտարակ համայնքում: Հանրային քննարկումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Աշտարակ համայնքի Աշտարակ բնակավայրի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

### **Պարտադիր կատարման ենթակա պահանջներ**

1. Մինչև շինանարական աշխատանքներ սկսելը կատարել հողամասի գործառնական նշանակության փոփոխություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետով սահմանված կարգի:
2. Պահպանել Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի 12 հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը):
4. Կանաչապատման և բարեկարգման նախագիծը համաձայնեցնել Աշտարակի համայնքապետարանի հետ:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Աշտարակի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
6. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:



## ԵՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԳԵՎՈՐԳ-ՄԱՌԱ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Աշտարակ համայնքի Աշտարակ բնակավայրի Երևանյան խճուղի 2/10 հասցեում նախատեսվող բազմաբնակարան շենքերի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
առաջին կարգի մասնագետ



Սուսաննա Անտոնյան